Դարձեալ հրաման եհան կրկին
Որ ամէնք գան վրկայ լինին,
Քաղաքացիք և դրսեցին
Ասեն զամէն մնաս Նիկոլին.
Ժողովեցան ամենեքեան.
Նզովից Նըվիրակին երկեան,
Եւ զինչ վրնաս վրբան գրտին՝
Գրբեալ՝ ի դուռն ժամուն զարկին։
Զայն լուեալ քոյրքըն Նիկոլին՝
Ցաւագերէցըն վազեցին.
Առ ոտն անկեալ աղաչէին,
Թէ, Թողէք մնա՝ եղբայրս հօտին։
Նա և այլք ։ երիցանին
Անփոյթ արին զխնդիր նոցին.
Նըվիրակին չիմացուցին.
Զկորուստ նորա զի հոգային.
Քանզի գոռոզք հըպարտք էին,
Զամէնքըն՝ ցած գէշ ունէին.
Ասեն. Կ'ուզէ թող թուրք լինի.
Մէկ մարդու պակսելն ի՞նչ լինի։
Դարձեալ խորհուրդ մի չար արին
Հայոց աղայք և քահանին.
Զեկեղեցիս ամրացուցին,
Մեծ մեծ կուպղայք դրբանցն եդին։
Իբրեւ վաղիւըն լուսացաւ՝
Տեսաւ զդրունս կպղեալ ժամին.
Առեալ զէմրէրն Թարիղանին (1),
Գնաց նա մօտ ի Եէզվիդնին.
Լալով ասաց զիւր գանգատնին,
Թէ, Հայք իմ գլուխս զինչ ան-
[ցուցին։
Ասեն 2. «Թէ լինիս Թապի փափին,
Եւ ընդ մեզ դնես ուխտ և դաշին,
Մեք օգնական լինեմք քեզի.
Փրկեմք ըզքեզ ամէն վտանգի,
Ըզքեզ առնեմք մեծ անուանի.
Զզուեմք ըզՀայք ազգի ազգի »։
Եպիսկոպոսն այն խիստ Թերի
Հաբեղայիւքն ամենայնի՝
Մըտան Լեհու եկեղեցին,
Երդուան լինել կրօնքս Ֆռանկին։
Կային անդ Լեհու վանաց հարք,
Մեծ դատաւորք բանիս վրկայք.
Գրեցին ի Թուղթ զայն դաւանանք,
Թէ, Հայոց մեծն եղեւ ֆռանկ։
Դարձեալ եկաւ Նիկոլն ի տան,
Խնդայր՝ Թէ ունիմ չատ օգնական.
Թողի զհաւատն սուտ և ունայն,
Որ Հայոց գլուխն բերեմ չատ բան։
Ո՛վ եղկելի Նիկոլ Թերի,
Նըմանեցար Պօղ երիցի, (?)
Կամ Վասակայ չար իշխանի,
Եւ այլ բազմաց ուրացողի.
Վա՛յ և եղուկ քոյ գլխի,
Եւ որք պատճառք եղեն քեզի.
Թողեր զհաւատն Լուսաւորչի,
Ելար յօրինացըն Հայի.
Է՞ր չի գնացեր յԷջմիածին՝
Որ մնայիր ի քո հաւատին.
Այլ սիրեցեր զփառս աշխարհի
Առաւել քան զփառս արարչի.
Շատ ոք քեզի խրատ տըվին՝
Թէ հնազանդիր դու Գրիգորին.
Այլ դու չար մարդկաց լսեցիր,
Եւ զհոգիդ մարմնով կորուսիր.
Ինատ արիր հետ ամենին,
Զիլըսեցիր բարեկամին.
Նստար ի ձին սատանային,
Սկսար առնել չար դէմ լաւին։
Թէ կամենից չէիր գնացել,
Վատ մարդկանց չէիր հետեւել,
Զարեաց Թղթերն չէիր առել,
Ի քո հաւատդ էիր մնացել։
Ո՛հ, ո՛հ, Թէ ի՞նչ բան քեզ արին.
Հազար ափսոս քո սուրբ հաւատին.
Ատուած առնէ վրէժ նոցին՝

1. Թրք. Թարիֆ. Պայմանագիր, օրէնք։ — 2. Ցիսուսեանք կ'ասեն զայս առ Նիկոլ։